ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 9 թիվ 297 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով և հիմք ընդունելով Ա. Տոնոյանի 2026 թվականի հուլիսի 7-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Աննա Տոնոյանին տրամադրել ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար **10** աշխատանքային օր տևողությամբ և 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար ամենամյա արձակուրդի մասը **15** աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 14-ը ներառյալ:

2. Աննա Տոնոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարե Խաչատրյանի վրա:

3. Աննա Տոնոյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 17-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/10/2026 12:24:30 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ